



ԿՈՄԻՏԱՍԻՆ ՀԵՏ\*

VII.— Կոմիտասը մեր կողքին



նույն այդ օրերուն, իր ամենեն խանդա-  
տա պահը կապրեր Պոլիսը: Թոթափած վա-  
նուց հուրրիկի գինովութունը ու անոր հա-  
րգող կրքոտ պայքարներու թափը, Պոլիսը  
որ հանդրման մը թևակոխեր էր:

Աղանային սթափած և վրդով, նոր ալյա-  
նարպութենեն, որուն ենթարկված էր թուրքը  
որ աչքերը հառելով թուրան, հայ ժողովուր-  
ը սկսեր էր ինքն ալ մտածել իր գոյութեանը  
ասին: Հայկական դատը սեղան էր եկեր  
մզամ մը ևս, ու հայր գացեր էր նորեն ծե-  
նելու եվրոպայի դուռները՝ թուրքեն ալյա-  
նույսը կտրած: Պահը շատ էր դժնդակ, որ-  
դեպի հայ ժողովուրդը շարունակեր տարի-  
ներ վատնել ունայն վեճերու մեջ: Համերաշ-  
տութեան նոր ալիք մը ման եկավ անոր բոլոր  
թավերեն ներս՝ միակ դանգված մը դարձնե-  
լու համար դանոնք վտանգին առջև, և միակ  
ակաա՝ հայ ժողովուրդի գոյութեան սիրույն:  
ոնը, զոր հայ ժողովուրդը պիտի սարքեր  
այդ տարին հանուն Սահակ—Մեսրոպին, մե-  
ազույն առիթն էր միացնելու անոր բոլոր  
թավերն ու դավանանքները:

Բայց ամենեն առաջ իրարու պետք է տաք-  
ային հայ մտավորականները:

Կոմիտաս այդ օրերուն հոգեկան կապ մը  
զարձավ բոլորիս միջև: Առանց անոր ներկա-  
յութեան մեր մեջ, պիտի չլերմանային կար-  
ծես մեր հոգիները, ու ցուրտ պիտի մնային  
դեպի իրար: Դժվար էր, արդարև, եղբայրակ-  
ցութուն ստեղծել քաղաքի մը մեջ, ուր ան-  
հատական գիծը միշտ զորավոր էր եղեր  
մարդոց մոտ և դանոնք զրկեր էր հավաքա-  
կան հուզումներու և հավաքական ճիգերու  
հնարավորութենեն. մարդիկ դժվար կ'ոտոն-  
նային իրարու, ամեն մեկը փորձելով իր  
պատշանին մեջ աշխատել: Բայց պահեր  
պետք էր, որ պատահին, որպեսզի մարդիկ  
զուրս դային իրենց խեցիկեն,— հասարակաց  
հոգի պետք էին Պոլիսը բռնկած գտնելու  
համար պահ մը հասարակաց ճիգերով: Ու  
դեռ ավելին կար: Պոլիսը հին օրերու Բյու-  
զանդիոնը մնացած էր միշտ, ունայն վեճե-  
րու դասական քաղաքը, ուր ամեն վեճն հե-  
տո ընն կ'մտար, կ'մնային փոխադարձ որն ու  
առեկութունը: Բյուզանդական այդ վեճերը  
Պոլիսը բորբոքեր էին հուրրիկի առաջին  
բանի մը տարին, ու հայ կյանքը լեցուցեր  
թույնով ու թշնամանքով: Կուսակցական  
պայքարները, Ազգային երեսփ. ժողովի սրա-  
հեն մեկնած, մտած էին բոլոր խավերը,  
զրգոնելով հարևանը հարևանի, եղբայրը եղ-  
բոր դեմ: Հայ մտավորականությունը, կու-  
սակցական այդ կոիվներուն ազդեցության

\* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1965 թվա-  
նի № 8 Ա-ից, 6-2-է-ից, Ը-Թ-Ժ-ից, 1966  
վականի № 8 Ա-Բ-Գ-ից, Դ-Ե-2-ից, Ը-Թ-Ժ-ից  
1967 թվականի № Գ-ից:

տակ, բաժան-բաժան էր եղեր ինքն ալ, ջլատեր, խամրեր և ուժ շուներ իր քննը թոթափելու նուշիսկ այնպիսի պահու մը, երբոր հայկական դատը իր նոր հունը մտած սիրո և եղբայրութեան, ինչպես և գործակցութեան կկանչեր բոլորը: Անշուշտ բոլոր կուսակցութեանց մեջ ալ կային կրքերեն զգված և կուսակցական վեճերու վրա վերեն նայող մարդիկ, բայց ուժը կպակսեր անոնց կամուրջ նետելու մեկ ափեն մյուսը: Կուսակցական վեճերեն բոլորովին վեր ու հայ ժողովուրդի մեծ հուզումներն զատ ուրիշ գրգիռ շճանչըցող մարդիկ պետք էին, որպեսզի օղակ դառնային խորթ եղբայրներու միջև, ու ցըրվեին փոխադարձ քննը:

Կոմիտասի ներկայութեանը մեր մեջ 1912—1913 տարիներուն, մեծապես սատարեց հոգիներու խորը կուտակված թուլնը ցրվելուն համար: Եթե կրցայնք այդ տարիներուն մերձեցման փորձեր ընել և միևնույն սեղանին շուրջը խմբել գծոված եղբայրակիցներ, բան մը կպարտինք և Կոմիտասին: Սիրո մթնոլորտը իր օճախեն սկսավ, հոն կհավաքվեին այնքան հոծ թիվով հայ գրչի և արվեստի մարդիկ՝ տարբեր-տարբեր հոսանքն ու համոզումն, եղբայրանալու սիրո այդ մթնոլորտին մեջ:



Այդ օրերուն էր, որ խումբ մը մտավորականներ գաղափարն հղացանք կազմակերպութեան մը մեր շուրջը համախմբելով հայ գրականութեան և արվեստի նախաձեռնութեամբ տոգորված մարդիկ, առանց հարցնելու անոնց տարբեր դավանանքները: Պահը այլապես ալ բարեղեպ էր: Գրական նոր դեմքեր, որոնք հետո մեկ-մեկ փառք պիտի հանդիսանային մեր գրականութեան մեջ, որպիսին Սիամանթոն, Վարուժանն ու Կոստան Զարյանն էին, Պոլիս էին արդեն այդ պահուն, Պոլիս էր նաև դեռ անտաշ այն գավառացին, որ Օշականը պիտի դառնար հետագային: Կոմիտասն էր, սակայն, որ իր հովանին տվավ մեզ:

Պաշարման վիճակի օրեր էին Պոլսո մեջ, ու արտոնութեան պետք էր, որպեսզի կարենար բով-բովի գալ մեր «Աստեղատուն»-ը, ինչպես կուզեինք կոչել մեր ծրագրած այդ կազմակերպութեանը:

Ցանկին մեջ, զոր կառավարութեան ներկայացուցիչն էր «Աստեղատուն» հիմնադիր, հետևյալ անունները կային.

- Կոմիտաս վարդապետ
- Տիկին Զապել Սասյան
- Նկարիչ Փանոս Թերլեմեզյան

- Նկարիչ Սարգիս Քյուրքճյան
- Դանիել Վարուժան
- Սիամանթո
- Կոստան Զարյան
- Հակոբ Քյուֆեճյան
- Գեղամ Բարսեղյան
- Հրանդ Նազարյանց
- Ահարոն
- և այս տողերը գրողը

Ցուցակը, զոր կազմեր էինք, չէր ընդգրկել անշուշտ, օրվան գրչի և արվեստի բոլոր մարդիկը, ոչ ալ մեր գատածները կարկառուն ղեմքեր էին բոլորն ալ: Նախաձեռնողներուն նպատակն էր եղեր, իրար հասկողներով խմբակ մը կազմել գրական շարժում մը սկսելու համար Պոլսո մեջ՝ կարկառուն ղեմքերու կարգին առնելով քանի մը համեստներ, որոնք պիտի կրնային ստանձնել գործունաշխատանքներու բեռը: «Աստեղատուն»-ը ոչ հայ գրողներու և արվեստագետներու միութեան պիտի ըլլար ուրեմն, ոչ ալ այլամերժ շրջանակ մը, ինչպես մեր տիտղոսը թերևս ենթադրել տար: Զարմանալի չէր հետևաբար, եթե մեր ցանկին մեջ ոչ Զոհրայը կերևար, ոչ Զարգարյանը, ոչ Թեքչյանն ու Շանթը, ոչ Սիպիլն ու Երուխանը, ոչ Կյուրճյանն ու Դուրյանը, ոչ Զրաբյանը, ու Գոյաճյանն, ու դեռ շատ-շատերը, որոնց ալ դիմում պիտի ընեինք գործունեութեան ատեն: Իսկ այդ գործունեութեանը ուրիշ բան պիտի չըլլար առայժմ, բայց եթե հիմը դնել գրականութեան և արվեստի տարեկրքի մը, որ «Աստեղատուն» պիտի հորջորջվեր, գրչի և արվեստի մարդոց հանդիպումներ սարքել հաճախակի, երաժշտական հավաքույթներ ունենալ, ցուցահանդեսներ նախաձեռնել, հրապարակային գրական գատեր ու վեճեր կազմակերպել ի հարկին:

Չուզեցինք մամուլով աղմուկ ընել սկիզբին: Պարսամյանի «Շանթ» էր միայն, որ սա քանի մը տողը արձանագրեց. «Կիմանանք, թե մեկ քանի թրքահայ երիտասարդ գրողներ նախաձեռնութեանը ունեցած են Պոլսո մեջ հիմնելու «Աստեղատուն» մը, իբր ժամադրալայր մեր երիտասարդ ուժերուն՝ բանաստեղծ, նկարիչ, երաժիշտ և այլն: Որքան ալ դեռ սաղմնային վիճակի մեջ ըլլա այդ ծրագիրը, մեր անկեղծ ցանկութեան էր, որ գոնե այս անգամ մարմին գտներ ան: Հաճույքը պիտի ունենանք մոտ ատենին մեր ընթերցողներուն ներկայացնելու «Աստեղատուն»-ի ծրագիրը»<sup>17</sup>:

«Աստեղատուն»-ը մյուս, սակայն, չծնալ: Նիստ մը միայն ունեցանք Կոմիտասի նա-

<sup>17</sup> «Շանթ», 1912 զեկտ. 1/14, թիվ 33:

խագահութեան տակ՝ վարուժանի տանը մեջ: Ժամ մը, երկուք, աղվոր-աղվոր խոսեցանք ու թաղեցինք «Աստեղատուն»-ը, որովհետեւ իմացեր էինք, որ ճիշտ քանի մը օր առաջ խումբ մը ուրիշ գործիչներ, որոնց անունը հայ գրականութիւնը վաղուց է մոռցած, ու լավ կըլլա, որ շփշմեմ ես ալ, հավաքույթ մը ունեցեր էին, իրենք եւս գրական ընկերութիւն մը սարքելու համար միշտ «Աստեղատուն» տիտղոսին ներքեւ: Այլուր պատմած եմ մանրամասնութիւնները ու հարկ չեմ տեսներ անդրադառնալ այստեղ եւս: Ըսեմ միայն, թե ինչ որ «Աստեղատուն» անունով պիտի ընեինք, շուտով փորձեցինք ընել ուրիշ տիտղոսներու տակ: Ու մեր բոլոր փորձերուն մեջ մեր կողքին մնաց Կոմիտաս, ու մեր վրաս անոր հովանին:



Մեր գործունեութիւնն սկսանք «Գրական ասուլիս»-ներով: Ինչ որ հնարավորութիւն չունեցանք «Աստեղատուն» անունով ընել՝ փորձեցինք ընել ուրիշ ֆիրմայի մը ներքեւ: Այդ ֆիրման Եսայան Սանուց Միութիւնն էր, որ Բերայի մեջ միակ միութիւնն էր այդ պահուն, որուն շուրջ հավաքված էր երկսեռ երիտասարդութիւն մը, և ուր ղեկավար դեր ունէր այս տղերքը գրողը եւս:

Երբ 1913-ի գարնան «Գրական ասուլիս»-ները կը նախաձեռնեի, զիս առաջին խրատաւորներէն մեկը Կոմիտաս եղավ: Բոլորը վախցուցեր էին զիս, թե հայ գրողները պիտի չընան բով-բովի: Կոմիտաս, ընդհակառակն, այն կարծիքն ունէր, որ այնպիսի պահու մը, երբ հայ ժողովուրդը հոգեկան մերձեցում մը կ'փորձէ հասարակաց ճակատ կազմելու համար՝ հանուն հայ դատին, հայ մտավորականութիւնը չի կրնար չմոռնալ իր փորձերի քննելը:

«Գրական ասուլիս»-ներն սկսանք 1913 մարտ 3: Առաջին մեր ասուլիսը նվիրված էր Շանթի «Հին Աստվածներ»-ուն: 1909-ին Թիֆլիզի մեջ գրված և Պոլսո մեջ տպված 1912-ին, Կովկասի մեջ բեմադրվելէ հետո էր միայն, որ ընդհանուր հետաքրքրութեան առարկա էր սկսած դառնալ Շանթի այս թատերախաղը՝ գրական դատերու իսկ նյութ հանդիսանալով: Նման դատի մը նյութ դարձնելու փորձ մըն էր նաև մերը, որ հորդաղիլ բազմութիւն մը համախմբել էր այդ օրը Եսայան վարժարանի սրահին մեջ:

Կոմիտաս մեկն էր գրական սուլն դատին ժլուրիին անդամներէն և մեկն եղավ անոնցմէ, որոնք Գրիգոր Զոհրապիւն հետ մեկտեղ, մերժեցին գրական դատի հանդամանք տալ Շանթի թատերախաղին շուրջ արտահայտ-

ված այս թերուզեմ կարծիքներուն, և ստիպեցին մեզ՝ կազմակերպողներս, որ «Գրական ասուլիս»-ի համեստ տիտղոսով բավականանանք մեր հետագա համախմբութիւններուն առթիւ, որոնց նյութ պիտի դառնային հետզհետեւ Գրիգոր Զոհրապ, Գանիել վարուժան, Ռուբեն Զարդարյան, Սիամանթոն և Հովհաննէս Սեթյան, շարք, որ պիտի տեսեր, եթէ աննպաստ պայմաններ չկաշկանդեին մեզ հետո:

Սխալ է, թե Կոմիտաս կ'նախագահէր առհասարակ «Գրական ասուլիս»-ներուն<sup>18</sup>: Ամեն «Գրական ասուլիս»-ի նախագահը կ'փոխվեր: Անոնց նախագահեցին, օրինակ, Գ. Խաժակ, Ռ. Զարդարյան, Ե. Օտյան, Ալեքսանդր Փանոսյան, Մեղքոն Կյուրճյան: Կոմիտաս Ռուբեն Զարդարյանի նվիրված ասուլիսին էր, որ նախագահեց, 1913 մայիս 5-ին, և այդ առթիւ արտասանած իր փակման խոսքը զրվատիքն էր գավառին ու անոր ծոցին հասունցած գրչի մշակներուն: Գավառի հոգեկան ղեղեցկութիւններուն փառաբանութիւնն ընելէ հետո, Կոմիտաս կ'անդրադառնար Զարդարյանի գրական վաստակին, այդ վաստակին մեջ անգամ մը եւս պանծացնելով գավառը:

«Ռուբեն Զարդարյան, որուն Եսայան Սանուց Միութիւնը կ'նվիրէ իր շորքորդ գրական ասուլիսը, մեկն է հայ գրականութեան սակավաթիւ դեմքերէն, որոնք ճանաչած են գավառը իր բնական և հոգեկան հարստութիւններով, և իրենց գործը կերտած են այդ հարստութիւններուն վրա, որոնք ժողովուրդինն են: Զարդարյան, իբր հեղափոխական, իր սիրտը կ'ապրած է ժողովուրդին սրտին, և իբր գրագետ իր միտքը կ'ապրած է ժողովուրդին մտքին հետ: Ժողովուրդին գավառն է Զարդարյան:

Ես իր «Յայգալույս»-ը դեռ այս տարի կարդացի: Երբ զայն կարդացի, Զարդարյանը չպատկերացուցի բնավ աչքերուս առջև, այլ ամբողջ ազգ մը, ամբողջ ժողովուրդ մը՝ իր ղեղեցկութեամբն ու շքեղութեամբ: Այդ մատչանը գրքի մը տպավորութիւնն չէր, որ թողուց վրաս, այլ կ'այնքի մը՝ իր բարեխումբներովն ու իր զգայնութեամբը:

«Երբ կ'թղթատի իր էջերը, բառեր ու նախադասութիւններ չէր, որ կ'պատկերանային աչքիս առջև, այլ կարծես անծանոթ էակ մը իմ ձեռքես բռնած կ'առաջնորդէր զիս անծանոթ վայրեր, ղեպի գանձեր բլուրազան ու ղեպի պերճութիւններ շողշողուն: Ու երբ Զարդարյանի վրա կ'խոսիս, կարծես թե ինքը բնավ գոյութիւն չունի ինձի համար, այլ

<sup>18</sup> Աղավնի Մեսրոպյան՝ «Ժամանակակիցները Կոմիտասի մասին», էջ 248:

կյանքը, այլ երկիրը, այլ հայրենիքը, որ այնքան գեղեցկություններ ունի: Իր գործին մեջ ես շտեպս ածականներ, այլ պատկերներ էին ամբողջ աշխիս առջև, զորս այնքան բանաստեղծներ կփնտրեին ու չէին գտներ, և զորս սակայն գրած է Զարգարյան, որովհետև զգացած է դանոնք, իրենց բովանդակ գեղեցկությունը մեջ:

«Ահա մարդ մը մեր առջև՝ արժանի ամեն հարգանքի: Մարդ մը, որ գավառի շունչը տվավ մեզի: Շնչնք այդ շունչը, մանավանդ դուք երիտասարդներ, շնչեցեք զայն երիտասարդական շունչով մը, որովհետև ան գավառն են կու գա, մեր հայրենի բնավայրեն, որուն արևը քաղցր է, ջուրը անուշահամ, երկինքը վճիտ և որը կենսատու և պայծառ, և որուն վրա կսավառնի գեղեցկությունը: Շնչնք այդ գեղեցկությունները»<sup>19</sup>:

Կոմիտաս զարդն էր նաև թեյասեղաններուն զորս սասայան Սանուց Միությունը կսարքեր ամեն մեկ ասուլիսի հետո, վարժարանի սրահներին մեկուն մեջ: Իրականին մեջ այս հանդիպումները ավելի հաճելի սկսած էին դառնալ, քան բուն ասուլիսները: Անոնք առաջին առիթներն էին Պոլսո հայ մտավորականներուն համար բովերովի գալու, վիճելու և կատակելու, իրարու կենաց խմելու... Թեյի բաժակներով: Կոմիտաս օր մը դիտել կուտար այդ հանդիպումներին մեկուն միջոցին թե հոգին եթե տրամադիր է կրնա գինովնալ և թեյով: Թեքեյան որ միշտ սրամիտ էր և պատրաստաբան՝ ընդմիջեց իսկույն.

— Մինչև Կոմիտասը չերգե, մեր հոգիները գինովնալու տրամադիր չեն...

«Մոկաց Միրզեն» թնդացուց իսկույն սրահը:

Վարուժանին նվիրված ասուլիսին հաջորդող թեյասեղանին էր, որ առիթը ունեցանք Կոմիտասը լսելու արվեստի մասին իր ներբողին մեջ: Սասայան վարժարանի ուսուցիչները օր. Զապել Նորիկյանի գլխավորությամբ, այդ օրը թամազա առաջարկեք էին Միմոն Զավարյանը: Զավարյան համակիր չէր այս ասուլիսներուն, ինչպես օր մը բացե ի բաց հայտնեց «Ազատամարտ»-ի մեջ տպված իր մեկ կծու հոդվածով այս տողերը գրողին և իր գործակիցներուն դեմ, ստիպելով Շավարշ Միսաքյանը, որ անոնց պաշտպանությունն ստանձնե նույն իսկ «Ազատամարտ»-ի մեջ:

<sup>19</sup> «Գրական ասուլիսներ», Գ, Ռուբեն Զարգարյանի «Ցայգալույս»-ը, Կ. Պոլիս, 1913, էջ 37—38 (Կոմիտասի փակման խոսքը նոթագրված է այս տողիս գրողին կողմ, որ կիմարգրեր ամեն մեկ գրական ասուլիսի հետո լույս տեսնող գրքուկը, սակայն Կոմիտաս տպվելի առաջ տեսած է զայն):

Զավարյան իր թամազայությունն օգտվեցավ գրողներու այս հավաքություն մեջ գրողները խժբժելու համար, իր խժբժանքը ուղղելով, սակայն, առավելապես անոնց դեմ, որոնք «արվեստը արվեստին համար» կընեն: Ու իր թամազայական պատգամը վերջացուց ջերմ զրվատիքովը Թուլթուլին, որ ժողովուրդին բարիքը միայն կմտածե իր ստեղծագործությունց մեջ և որուն պետք է հետևին ուրեմն բոլորը:

Առաջին «բեպլիկան» Կոմիտասն եկավ: Ան իմաստ չգտավ սահմաններ գծելու արվեստի երկերու միջև: Ամեն գործ, ըսավ, օգտակար է ժողովուրդին, երբ արվեստագետը չի հեռանար բնութենեն, անկեղծ է իր արտահայտությունց մեջ, և ունի նաև մտահոգությունը ձևին, երբ կստեղծագործե: Տգեղ երկերը բարիք չեն բժրեր, եթե բարիք ընել ալ ուղեն:

Հետո քանի մը ջերմ խոսքեր ուղղեց վարուժանի հասցեին, որ ներկա չէր իր ասուլիսին և անոր հաջորդող այս հանդիպումին, ինչպես ներկա չէին ըլլար անոնք, որոնց մասին կխոսվեր:

«Նավասարդ»-ն եղավ մեր հերթական ձեռնարկը: Տարեգիրքը, զոր կուզեինք պահ մը «Աստեղատուն» անունով լույս ընծայել, մեր ուսին առինք Վարուժանն ու ես: Տեղը չէ հոս պատմելու ընդունելությունը, զոր «Նավասարդ»-ը գտավ: Լույս տեսած Մեսրոպյան տոներու ոգևորության օրերուն՝ գրական շարժման մը սկիզբը պիտի դառնար ան, եթե հետագա դեպքեր մեկ շփեցնեին մեր թափին մեջ, ինչպես բրին «Մեհյան»-ին ես, որ ծնունդ առած նույն խանդավառության օրերուն՝ Կոստան Զարյանի, Հակոբ Օշակյանի, Գեղամ Բարսեղյանի նախաձեռնությամբ, պիտի ստիպվեր նույնպես կանգ առնել իր խանձարուրին մեջ, աղվոր սկզբնավորութենե մը հետո:

Կոմիտաս մեկն էր «Նավասարդ»-ի առթիվ ես մեկ խրախուսողներեն, և առաջիններեն, որ իր աշխատակցությունը խոստացավ մեզի: Եթե չճանչցար դուք Կոմիտասը, իր բժախնդրությունը, իր տատամսունքները հրապարակ իջնելի առաջ, պիտի չկրնար ըմբռնել ուրեմն շարժարանքը, զոր ես կրեցի մինչև որ կրցա գրել տալ իրեն «Առու գութաներգը»: Տառապանք մը եղավ ինձի համար ամեն օր իր դուռը ծեծել՝ հարցնելու, թե երբ պատրաստ կըլլա հոդվածը: Ան միշտ կհամառեք երկար խոկալ իր մշակման վրա, որովհետև առաջին անգամ էր, որ պիտի ներկայանար տեսական լրիվ նյութով մը, մինչև մենք՝ Վարուժան և ես, անհամբեր էինք «Նավասարդ»-ը հրապարակ հանել Մեծ Հոբելյանն առաջ: Վերջին պահուն էր միայն, որ

Կոմիտաս իր հողավածը մեզ հանձնեց, և «Նա-  
պասարգ» հպարտ պետք է սեպե զինքը, որ  
այ հրաժշտութեան նման թանկագին էջ մը  
պարզեց:



Տարին պիտի փակեինք տոներուն ամենն  
բեղովը:

Տոնական տարի հուշակված էր 1912 հոկ-  
տեմբեր—1913 հոկտեմբերը: Ամբողջ տարին  
պետք է ան տոնվեր հայաշատ բոլոր քաղաք-  
ներուն մեջ, ու 1913 հոկտեմբեր 13-ին փակ-  
վեր փառաշուք կերպով: Պոլիս սակայն քնա-  
կեր էր բովանդակ տարին, ու ղեռ կրնանար,  
Մինչև հոկտեմբերը կամոտենար արագ-արագ,  
և որևէ պատրաստութիւն չկար պատվով դի-  
մապորտելու համար դայն: Ազգային իշխանու-  
թիւնները ոչ իսկ այդ մասին մտածած ու-  
նեին ղեռ:

Քաղաքին միութիւններուն կմնար տեր  
կանգնիլ տոնին: Նախաձեռնութիւնն առինք  
Տիգրան Չեղկուրյանն ու ես, ան՝ կովան ա-  
ռած Պերպերյան վարժարանը, ես՝ կոնակա-  
կված Ծալայան Սանուց Միութեան: Անոնց  
անունով ժողովի կանչեցինք, կեդրոնական  
վարժարանի դասարաններն մեկուս մեջ,  
մեյ-մեկ ներկայացուցիչ Պոլսո թաղային  
Միութիւններն, ու հիմա, ավելի ևս զորա-  
տած, վճեցինք շարժման անցնել:

Չեղկուրյանին հետ Կոմիտասին վազե-  
ցինք: Ան միայն կրնար տոնը փառաշուք  
ընել: Խոստացավ, ու իրավ ալ փառաշուք  
ըրավ տոնը:

Իր մասին հուշեր գրողներ, և անոնցմե առ-  
նելով իր կենսագրութիւնը հորինողներ ալ  
այնպես ցույց կու տան, որ իբր թե Կոմի-  
տասն ըլլա Տառերու Գլուտի տոնները սար-  
քող: Կոմիտաս պաշտոնական ոչ մեկ ղեր  
ունեցավ անոնց կազմակերպման մեջ: Անոր  
ղերը շատ ավելի շքեղ էր: Ան տոներուն ուղ-  
ղակի հոգին եղավ: Եվ արդարև առանց Կո-  
միտասին տոները պիտի չունենային բացա-  
ռիկ այն փայլը, զոր ունեցան իրային:

Ան իսկույն լծվեցավ գործի, և իր առա-  
ջին հոգն ըրավ դաշնակել «Ով մեծասքանչ  
դու լեզու»-ն: Հետո սկսավ «Գուսան» երգ-  
չախումբը մարզել, համերգի մը համար, զոր  
պիտի սարքեր Ծալայան Սանուց Միութիւնը  
հոկտ. 13-ի կիրակին, Փրթի-Շանի մեջ:

Մինչ այս, մինչ այն Ազգային իշխանու-  
թիւնները ևս արթնցան, և տեր կանգնեցան  
տոնին: Պաշտոնապես պիտի տոնվեր ուրեմն  
Մեծ Հորեկայնը, որ իր մեջ կմիացնէր  
1500-ամյակը հայ տառերու գլուտին, և հայ  
տպագրութեան 400-ամյակը, հոբելյան, որ  
տոնվեցավ այնպիսի շքեղութեամբ, որպիսին

Պոլիս չէր արձանագրած երբև իր տարե-  
գրութեանց մեջ:

Տոները բացվեցան հանդիսավոր այն նիս-  
տով, որ 1913 հոկտ. 11-ին ի մի գումարեց  
երեք հայ տարանվանութեանց երեսփոխա-  
նական ժողովները՝ հայ ժողովուրդի հոգեկան  
միութիւնը հուշակելու համար համազգային  
այս տոնին առթիւ: Առաջին սփոփարար  
ղեպքն էր՝ երեք հայ դավանանքներու հան-  
դիսավոր այս համախմբումը հորմե հետե  
մրրիկ մը ճեղքեր էր հայ ժողովուրդը ներսն:  
Նման հանդիսավոր նիստեր մեկ ալ Զինա-  
դադարին պիտի ունենայինք՝ մեծ աղետն  
հետո պահ մը կրկին եղբայրացած:

Հաջորդ օրը, հոկտեմբեր 12, Տոն թարգ-  
մանչաց, հանդիսավոր պատարագ տեղի ու-  
նեցավ Մայր Եկեղեցիւ մեջ: Կոմիտաս և  
Շահմուրադյան մասնակցեցան երգեցողու-  
թեանց՝ կրկնապես հանդիսավոր դարձնելով  
օրը: Պատարագը Ղալաթիո Գարաց Դասն էր,  
որ երգեց Կոմիտաս վարդապետի ղեկավա-  
րութեամբ:

Ժամվան մը դադարե հետո Մայր Եկեղեց-  
ւո մեջ տեղի պիտի ունենար պաշտոնական  
տոնախմբութիւնը: Հրավիրված էին օտար  
հյուրեր ալ, ինչպես թուրք կառավարութեան  
անդամները և ներկայացուցիչներ բոլոր հայ  
կազմակերպութիւններն: Աննկարագրելի  
էր խանդավառութիւնը, որ կտիրեր եկեղեց-  
ւո մեջ ու շուրջը, ու շրջակա փողոցներուն  
մեջ ալ: Հյուրերը բազմութեան մեջն հազիվ  
ճամփա կգտնեին պահարանի դռնն ներս  
սպրդելու համար: Երեք հայ տարանվանու-  
թեանց կողմե ճանոր ըսին ղեկու. Վ. Քոր-  
գումյան, Գրիգոր Ոսկյան և վերապատվելի  
Ա. Շամվոնյան, իսկ պրոֆ. Աբրահամ Տեր-  
Հակոբյան, Ազգային ժողովի ատենապետը,  
որ պիտի նախագահեր հանդեսին, չէր կրցած  
եկեղեցիին մտնել ներս: Թուրքերն խոսե-  
ցավ Ստեփան Կուրտիկյան: Հանուն կառա-  
վարութեան խոսք առավ թալիաթ Բեյ: Հայ  
ժողովուրդի գահիճը հայութեան փառաբուշ  
խոսքեր ուղղած այդ պահուն, ո՛վ զիտե ինչ  
կզգար հոգով: Նախանձն ու յիսը հավանա-  
բար դայն կշարաբեին այդ պահուն: Կոստան  
Զարյան հատված մը արտասանեց Սիաման-  
թոյի զմայլելի «Սուրբ Մեսրոպ»-ն, զոր մեծ  
բանաստեղծը հորինել էր տոներուն առթիւ:  
«Գուսան» երգչախումբն էր սակայն, որ Կո-  
միտաս վարդապետի ղեկավարութիւնը, ա-  
վելի ևս պաշտելի պիտի դարձնէր տոնը իր  
«Մեծասքանչ»-ով և ուշիշ երգերով:

Ժողովրդական հանդեսները պիտի սկսեին  
շաբաթ զիշերվրնե, Փրթի-Շանի մեջ սարք-  
ված երեկույթով մը, զոր կազմակերպած  
էին դաշնակցական և հնչակյան ուսանողա-

կան միությունները: Հանդեսին նախահագեց  
և բացման խոսքն ըրավ ինքը՝ Կոմիտաս  
վարդապետ, որ մեններգեց նաև հաննդսին  
ընթացքին: Օրվան բանախոսներն եղան  
է. Ակնունի և զոկտ. Պեննե, որոնք տոնը փա-  
ռաբանեցին, իբրև մեծագույն դեպքերեն մե-  
կը հայոց պատմութիւն: Երկու տարի շան-  
ցած Ակնունի պիտի հոշոտվեր Միջագետքի  
անապատներուն մեջ, իսկ Պեննե կախաղան  
պիտի բարձրանար Պոլիս, Բայազեդի հրա-  
պարակին վրա: Հանդեսը գեղարվեստական  
բաժին ալ ուներ, որուն մաս առին Սինան-  
յան եղբայրներ, օր. Աղավնի Մեսրոպյան և  
Քորգոմ Պեղազյան:

Գեղարվեստական հանդեսներուն գեղեց-  
կագույնը հաջորդ, կիրակի օրվան, վերա-  
պահված էր:

Բայց նախքան այդ...

Կիրակի առտու կանուխ ոստիկան մը  
կներկայանա տունը: Զիս Կալաթա-Սերայի  
պահականոցը կկանչեն: Հազար կասկածի  
կերթա միտքս, մինչև պահականոց կհաս-  
նեմ: Հոն միայն կիմանամ, թե կանչած են  
զիս բացատրութիւն ուզելու «դավաճանա-  
կան դեպքի» մը համար, որ տեղի ունեցած  
էր նախընթաց գիշերը: Շաբաթ գիշերվան  
հանդեսը թեև կազմակերպված դաշնակցա-  
կան և հնչակյան ուսանողական Միութեանց  
նախաձեռնութեամբ, ոստիկանութունը զիս  
պատասխանատու կեպեր «խոռվարար փոր-  
ձին» համար, որովհետև Բերայի բոլոր հան-  
դեսներուն արտոնութիւնը իմ անունովս  
առնված էր: Քիչ մնաց ոստիկանատուն պի-  
տի բերեին Կոմիտասն ալ՝ գիշերվան հան-  
դեսին նախագահած ըլլալուն համար: Ինչ  
էր սակայն պատահած դեպքը: Վահան Զար-  
դարյան, ծանոթ զբավաճառը հանդեսի պա-  
հուն մոզական լապտերով ցույց տված էր  
գրբու գլուտին հետ առնչութիւն ունեցող  
կարգ մը պատմական դեմքեր, որոնց կար-  
գին Վոսաճապուհ թագավորն ալ, և այս  
արդեն ոճիր էր...: Հաղիվ կհրաժարին Կոմի-  
տաս վարդապետը ձերբակալել բերելու միտ-  
քեն, ու դժվարով կրնամ օձիկս ազատել ես  
ալ՝ պատրվակելով, որ պետք է անհապաղ  
Փրթի-Շան գտնվիմ ցորեկվան հանդեսին  
պատրաստութեանց համար: Այնուամենայ-  
նիվ վար կդնեն երկու ուսանողական միու-  
թեանց վարիչները, զորս հաղիվ հաջորդ օրը  
կարձակեն բազմաթիվ միջամտութիւններ  
հետո:

Կիրակի ցերեկույթը, Եսայան Սանուց  
Միութեան կողմն կազմակերպված, արվեստի  
փառատոն մը եղավ: Կնախագահեր Ռուբեն  
Զարդարյան: Հանդեսը բացվեցավ «Նմանեալ  
Մովսեսի» շարականով, զոր դաշնակած էր

Կոմիտաս, և զոր երգեց «Գուսան» երգչա-  
խումբը իր ամենն լրիվ կազմով: Երգչա-  
խումբը հանդեսին ընթացքին պիտի երգեր  
նաև «Տէր կեցո», «Ով մեծաբանը դու լե-  
զու», «Ես լսեցի մի անուշ ձայն»:

Օրվան բանախոսներն էին Դանիել Վարու-  
ժանը և Գ. Խաժակ: Կոստան Զարյան հատ-  
ված մը արտասանեց Սիամանթոյի «Մուրը  
Մեսրոպ»-են, ջերմ մթնոլորտ մը ստեղծելով  
իր կարգին, և երբ արտասանութիւնը  
լմնցուց՝ Կոմիտաս վարդապետ բեմ հրավի-  
րեց Սիամանթոն, որ կերեւոր ըովնտի օթյակե  
մը, և զոր սրահը ողջունեց ջերմագին: Գե-  
ղարվեստական հայտագրին մասնակցեցան  
նաև Սինանյան եղբայրները, և Մ. Զանան,  
որ արտասանեց Զոպանյանի «Գեղոն հայ  
լեզվի»-ն: Գերասան Աղյան կենդանի պատ-  
կերներ պատրաստած էր երկու հանդեսնե-  
րուն ալ:

Պոլսո բոլոր թաղերը հանդեսներով ու ճա-  
ռերով թնդացին այդ կիրակի օրը՝ ցորեկին  
թե գիշերը: Թաքսիի պարտեզին մեջ խոսե-  
ցան պրոֆ. Հակոբոս Ճեճիզյան, Գրիգոր  
Մալխաս և Թեոդիկ, իսկ թուրքերեն՝ Ստե-  
փան Կուրտիկյան, Բերայի կառավարիչ Քիա-  
նի Բեյ, և Զեմալ Բեյ, հայոց ուրիշ մեկ թշնա-  
մին: Գառըգլուղի մեջ խոսք առին Եղիշե  
արք.: Դուրյան, Գրիգոր Զոհրապ և Արշակ  
Ալպուշեճյան, Պեշիկթաշի մեջ՝ Դանիել Վա-  
րուժան, Ռուբեն Զարդարյան, Միհրան Թա-  
պաքյան և նաև Մեհմեդ Էմին Բեյ, որ ղեկ  
բարեկամ կձևանար հայերուն, Սկյուտարի  
մեջ՝ Հ. Մրմրյան, Տիգրան Զեռեկայան, Տի-  
րան Զրաքյան և Շահան Պերպերյան, Գրեա-  
լըի մեջ՝ Հմայեակ Խոսրովյան և Արշակ Ալ-  
պոյաճյան, Ռոբերթ քոլեջի մեջ՝ պրոֆ. Ար-  
րահամ Տեր-Հակոբյան և Հովհ. Հակոբյան,  
ու Շահադե Բաշլի մեջ՝ պրոֆ. Ա. Խա-  
չատրյան:

Պոլիս այդ օրերուն շարժման մեջ դրած էր  
իր բովանդակ մտավորականութիւնը ի  
փառս Մեսրոպին ու Մեղապարտ Հակոբին,  
իսկ բովանդակ հայութիւնը կցնծար արեւ-  
ցութեամբ և հպարտութեամբ մինչ ով դիտե  
ինչ թշնամանքով ու ինչ թունավոր նախան-  
ձով կդիտեին մեզ մեր հարեանները: Եվ դեռ,  
հայոց պատրիարքարանի խառն ժողովի ո-  
րոշմամբ, ղանց առնվեցան, պաշարման  
վիճակը նկատի ունենալով, ժողովրդական  
թափորը Գումգափուն դեպի Բերա, և գի-  
շերվան ջահազնացութիւնը, որոնք նախա-  
տեսված էին իբրև հանդիսութեանց մաս:

Հայ ժողովուրդը, երկու տարի շանցած,  
պիտի պատժվեր, որովհետև շատ մեծ էր  
եղեր հոգովով, և շատ փարած իր հոգեկան  
հարստութեանց ու իր ավանդութիւններուն...



Գրեթե կես դար հետո երրորդ կգրեմ ես այս տողերը, խանդավառությամբ, վերացման, հոգեկան կազդուրդի օրեր կապրի նորեն հայ ժողովուրդը: Դարձյալ կտոնվի Մեսրոպ Մաշտոցը: Նույն տոնն է, նույն մեծարանքը, բայց որքան տարբեր պայմաններու մեջ: Երեկ սփոփանքի պահ մըն էր ան հայ ժողովուրդին համար, անուշ ովասիս մը՝ լույսին, կյանքին ետեկն անոր խղճ վազքին մեջ: Երախտագիտության տուրքն էր հայ ժողովուրդին դեպի շքեղ այն դեմքը, որ գիր ու լույս էր տվեր իրեն և ուխտ մը՝ հավատարիմ մնալու մեծ պատգամներուն, զորս դարերը կրեբին մեզ, մինչև գային սպալած օրերը: Այդ օրերը եկան, ու մեր կարծածեն ավելի արագ: Բայց եկան սարսափներու ծոցին անցրնելով հայ ժողովուրդը:

Հիմա դարձյալ Մեսրոպ Մաշտոցը կտոնենք: Բայց այս անգամ հայրենի հողին վրա: Երախտագիտության տուրք մըն է դարձյալ այս տոնը անմահ այն մարդուն հանդեպ, որ մեզ դիմացուց դարերուն ու սարսափներուն, և ուխտ մը դարձյալ՝ կանգ շտնելու դեպի լույսը մեր գրոհին մեջ:

Օրացույցիս կնայիմ: 1962 մայիս 26: Երեանի մեջ կտոնեն Մեսրոպ Մաշտոցն այս պահուս: Վար կղնեմ պահ մը գրիչս: Վայրկյան մըն է, երբ մարդ պետք է խոնարհի դարերուն առջև, որոնք մաքառեցան, տընեցան, ստեղծեցին մեզ համար: Որոնք արշան ծովերն անցան ու շվհատեցան: Որոնք հեզեցին աշխարհի բոլոր փորձությունները, բոլոր խուժերը իրենց ճամփուն վրա: Որոնք մեզ Մաշտոցը տվին ու Կոմիտասը:

Ամփոփման ի՞նչ բաղցր վայրկյան: Կփակեմ պահ մը աչքերս, որպեսզի այն օրերը անգամ մը ես վերապրեմ հիմա: Յնծութունը, որ մեզ վարակեց բոլորս այն ատեն, ու դարերը, որ հանկարծ խլտեցան մեր ներսը: Աշխարհը, որ զարմացած մեզի կնայեր, տեսնելով ժողովուրդ մը այսքան ջերմ փարած իր հոգեկան գանձերուն, ու թշնամին, որ կարմրեր էր ամոթեն ու նախանձեն, որ մեզ կժպտեր, բայց ցատուհեն կողոպտ:

Կտողանցեն այս կարգավ մտքիս առջևն, ա՛հ, ինչքան սիրելի դեմքեր, որոնք տոնական այն օրերը ապրեցան մեզ հետ,— Սիամանթոն ու Վարուժանը, Ջոհրապն ու Զնորդարշանը, Սևակն ու Զեռկուրջանը, Կյուրճյանն ու Երուխանը, ու ամբողջ հույր նվիրյալներուն, մեծ ու պղտիկ, ու անզուգական մեր Կոմիտասը, որ կկոթողանար անոնց բոլորին մեջ:

Իզուր կփորձեմ աչքերս բանալ. մտածումս թևեր առած կթռչի: Կանցնե զիս արշան զե-

տերու մեջն, դիակներու կույտեր կհանե զեմս, ու կկեցնե զիս տեղ-տեղ ու կխաշակնքե երկյուղած: Մոխիրներու կույտին ու սրբերու արցունքին մեջն ափ կհանե զիս, դարձյալ կլեցնե հոգիս հույսով ու արբեցությանը, ցնորքներ կբռնկցնե մեջս ու կմարե շուտ մը ու մեկին կնետե անձանոթ ափ մը:

Եվ ահա, հանկարծ, Երեան ենք: Կտոնեն Մեսրոպ Մաշտոցը: Դարերը ծունկ են շոքեր մարդու մը առջև, որ հայ ժողովուրդին բացեր էր լույսի մեծ ճամփան, ջահեր վառելով անոր ոտք Կոթած տեղը:

Երեանը կխայտա, ու անոր հետ բովանդակ հայ ժողովուրդը: Դարերը, իրենց գերեզմանեն ելած, կհամբուրվեն ցնծությամբ: Կողջագուրվեն ողջերն ու մեռելները: Ահա հոն են բոլորը հին ու հոն՝ բոլոր մեր փառքերը: Եկեր են անգամ մը ես տոնելու Մեսրոպ Մաշտոցը:

Սիամանթոն է ահա, որ Մաշտոցի արձանին դեմը հպարտ ցցած հասակը՝ կաղաղակ խանդաբորբ:

Մեսրոպ, հայ դարերուն դիմաց կեցով Դուն աղամանդյալ ապառաժ...

... Դուն բարբառի առաբիչ, բանի իշխան, Դուն անբավ բավիղ տեղուրյան...

Դուն անվառնելի ցուրանի դաշտ, դուն ձրի հայ.

Դուն հունձֆ հարուստ, և դուն հեճան հրաշեկ...

Վարուժանն ահա, որ միտքած իր հոգին ծոցը դարերուն և հին ավանդությանց, կհնչեցնե քնարին վրա.

Ձի մեճֆ հանուն սերի՛ն, սերմի՛ն  
 Բու հին ցեղիդ մարմարե՛ն կույս.  
 Մեճֆ, զավակներդ օգոստափառ,  
 պիտի կերտեճֆ հոր արշալույս...

Եվ ահա Կոմիտասը ինքն է անուշ, ինչպես «Անտունի»-ն մեզ երգած պահուն, շքեղ ինչպես երբ մեզ կորոտար «Մոկաց Միրզեն», կու զա համրաբայլ, լուռ ու խոհուն, ու կողջագուրվի Մեսրոպ Մաշտոցին հետ:  
 Ու Մասիսը կժպտի հեռուն...

VIII.— Նոր սերունդին հետ

Բայց Կոմիտաս նոր սերունդինն եղավ առավելապես: Անոր վրա էր դրած իր բովանդակ հույսը, և անով էր որ կոզկտրվեր միշտ: Ռուբեն Զարդարյանի նվիրած մեր ասուլիսին, ու սապես կսկսեր իր փակման խոսքը: «Ահա երիտասարդությունը որ մեր առջին է: Ահա շորորդ անգամն է որ ան խուսնեբամ կվազե հոս՝ իր գրականությանըն ու գեղարվեստովն հետաքրքրվելու և խանդա-

վառվելու համար, մինչ մենք... ծերացածներս, Զարդարյանի նկարագրած գամփոխին նման քոսոտած, փողոցի տղոց քար նետելուն կսպասենք շարժելու համար: Մինչ երիտասարդությունը, — որ կյանք ու արև կսիրեի, — կվազե կերթա հոն ուր գեղարվեստը կփառաբանվի: Ու գեղարվեստը արդեն ազգի մը արևն ու կենսունակության շիրը չէ՞ միթե»<sup>20</sup>:

Գրականության և արվեստներու հանդեպ երիտասարդության ցույց տված ոգևորությունը չէր միայն որ կխանդավառեր զինքը, այլ ամեն շարժում որ երիտասարդությունը կկապեր իրեն: Մարդկան շարժումը, օրինակ, մեկն էր անոնցմե որոնց փրկարար դերին հավատացած էր Կոմիտաս:

Ինչպես հայտնի է՝ հայ մարզական շարժումը ևս խանդավառ օրեր պարեցավ հուրբիեթի տարիներուն: Համիդի ամբողջ շրջանին՝ հայ երատասարդությունը սպորտին հետև էր պարբեր, եթե չհաշվենք Պոլսո և գավառի ամերիկյան բուլեճները հաճախող հայ առակերտները որոնք բախտավոր էին եղեր, և մեկ ալ կեղրոնական տղաքը որոնք ունեին ֆութպոլի իրենց համեստ խումբը:

Սահմանադրությունը սակայն բռնկցուց իսկույն հայ պատանեկությունը: Պոլսո բուրթը թաղերուն և գավառական կեղրոններուն մեջ վայրկյանին բուսան ֆութպոլի խումբերը: Ստեղծված ոգևորությունը ավելի ևս թափ ստացավ երբ 1911 հունվարին սկսավ լույս տեսնել հայ առաջին մարզական թերթը՝ «Մարմնամարդ»-ը, Շավարշ Քրիսյանի խմբագրությամբ, ու նույն տարվան մայիս 1-ին սարքվեցավ «Հայկական առաջին ողիմպիական»-ը Գատրգուղի Յունիոն Քլյուպի մարզադաշտին վրա:

Անշուշտ կծիծաղի հիմա ընթերցողը հանդուգն տիտղոսին համար զոր տվեր էինք այն ատեն ատլետիկ այդ համեստ մրցումներուն, և այն ոգևորության վրա զոր պարզակեր էին մեր տղոց շահած նույնքան համեստ մրցանիշերը: Բայց միտք բերեք շրջանը, երբ հայ ժողովուրդը կապանքներն նոր ազատած, բռնկած էր հույսերով և գինովությունամբ, ու երիտասարդություն մը կար արդեն որ կվազեր սանձարձակ՝ անհնարին երազներու ետևեն: Ո՞վ կրցավ իր հուզումը զսպել այդ օրը երբ հայ մարզիկները իրենց առաջին տողանցքն ըրին զույգ մը ֆանֆառ առջևնուն, և երբ օրվան թագուհին մեղալ կկախեր օրվան հաղթանակներուն կուրծքեն:

Հայկական Գ. ողիմպիականը պահ մը շեղեցավ ընդունված կարգեն: «Օրվան թա-

գուհի»-ի տեղ ուզեց ունենալ «Օրվան նախագահ» մը: Բուրդին մտածումը Կոմիտասին գացեր էր իսկույն: Երիտասարդության կուրքն էր ան այդ տարիներուն, և միայն ան կրնար հովանավորել հայ երիտասարդության տոնը: Երբ Շավարշ Քրիսյանի, Գրիգոր Հակոբյանի և Ժիրայր Խորասանճյանի հետ մեկտեղ գացինք առաջարկելու իրեն «Օրվան նախագահ»-ն ըլլալ, Կոմիտաս հրճվանքեն խայտաց, և հայ երիտասարդության այդ օրվան տոնը՝ տոնական օր մը եղավ և իրեն համար: Մանկական ոգևորություն մը արցումներուն, և ցրնծություն պահ մըն էր երբ մեղալները կղետեղեր օրվան հաղթականներուն կուրծքին:

**IX.— «Ռուս քեռին»**

Հուրբիեթի շոր տարիները հուսախաբ ըրած էին հայ ժողովուրդը: Հայ և թուրք եղբայրությունը լղրճված էր իր մեղրալուսինին մեջ իսկ. Ադանայի կոտորածը, 1909 մարտ 31-ին և հաջորդող օրերուն, եկած էր խորտակել հայկական միամտությունը: Հայ ժողովուրդը, մեկեն արթնացած իր գինովութենեն, շվարած էր պահ մը:

«Երիտասարդ թուրքեր»-ու մենատիրությունը հաջորդեր էր համիդյան բռնակալության: Ոչ թուրքը խորթ զավակ կնկատվեր միշտ երկրին: «Օսմանցի»-ությունը, որուն նշանաբանով իշխանության գլուխ էին եկեր «Երիտասարդ թուրքեր»-ը, փլեր էր խալաքարտե աշտարակի մը պես, և զժգոհության ալիքը կտարածվեր տակավ բաղկացուցիչ բոլոր ոչ թուրք տարրերու ծոցին մեջ: Քրիստոնյաներուն հետ մեկտեղ թուրքին դեմ լարված էին ոչ թուրք իսլամներն ալ, մանավանդ արաբն ու ալբանացին, և կորոնեին արդեն թուրք լուծը թոթվելու ճամփան:

Հայը, դարավոր բայան, որ ամենեն շատ խանդավառվեր էր օսմանցիությունը և ամենեն շատ հուսախաբ եղեր, չէր կրնար ավելի երկար իր ճակատագիրը վստահել թուրքին բարչացակամությանը: Համաթրքության ցնորքը՝ զոր որդեգրեր էին «Երիտասարդ թուրքեր»-ը՝ չէր կրնար, իր կարգին, բացառապես շտահոգել հայը, որ թուրքիո բաղկացուցիչ տարրերեն գրեթե միակն էր թուրան տանող ճամփուն վրա:

«Թուրք օճաղի»-ն, որ կհիմնվեր 1912 մարտ 26-ին՝ իր անմեղունակ կերպարանքին մեջ, թուրանի ճամփան կբանար, անոր պատրաստելով թուրք երիտասարդությունը:

Մյուս կողմն վրդովիչ լուրեր կհասնեին հայկական գավառներեն: Համիդի օրերը ի նորո կենդանացեր էին հայկական շրջաննե-

<sup>20</sup> «Գրական աստիճաններ», Գ, Ռուսին Զաբալարյանի «Ցայգալոյս»-ը, 4, Պոլիս, 1913, էջ 36:

րու մեջ: Պատրիարքարանը կողոզվեր սրտա-  
ճըմլիկ տեղեկագիրներով և իր կարգին իր  
խարրիրներով կոմբակոճեր Բարձրագույն  
Գույր, առանց դուլդն արդյունքի:

Այլևս թմրած մնալ հնարավոր չէր: Հայ  
ժողովուրդը ստիպվեցավ սեղան բերել իր  
դատը, և անգամ մը ևս երթալ բախել քաղա-  
քակիրթ աշխարհի խղճամտանքին, որպեսզի  
նոր աղետ մը խնայվի անպաշտպան այս  
ժողովուրդին:

Այս պայմաններուն տակ էր որ վերստին  
արժարժվեցավ հայկական բարենորոգում-  
ներու խնդիրը: Ժողովուրդը մեկ մարդու պես  
փարվեցավ իր դատին: Չեռք-ձեռքի ավլին  
հեղափոխականն ու պահպանողականը, հա-  
մազգային ընդհանուր ոգևորության մը մեջ:  
Պոլիս իր ցավը արձագանք կու տար Աղզ-  
երեսփ. ժողովի բեմեն, իսկ Մայր Աթոռը  
ազգային պատվիրակություն մը կստեղծեր  
Փարիզի մեջ՝ հայկական դատը հետապնդե-  
լու համար Մեծ պետությանց մոտ: Ու մինչ  
Բալկանյան պատերազմը կու գար, ճիշտ  
այդ օրերուն, աղատագրել քրիստոնյա ժողո-  
վուրդները եվրոպական Թուրքիո մեջ, վեց  
Մեծ պետությանց Պոլսո ղեսպանները նիստ-  
նիստի վրա կընեին բարեկարգության օժ-  
տելու համար Թուրքիո հայաբնակ շրջան-  
ները:

Հուլյսը, խանդավառությունը վարակեր էին  
այդ պահուն բովանդակ հայ մտավորակա-  
նությունը: Այդ ընդհանուր ոգևորությունն  
վարակված էր նաև Կոմիտաս: Իր հրճվանքը  
կրխեր մանավանդ անկե, որ վեց Մեծ պե-  
տություններեն առավելապես ռուսն էր զո-  
րավիզը բարենորոգումներու նոր ծրագրին:

1912 ղեկտեմբեր 25-ին, ճիշտ այն օրե-  
րուն, երբ Պոլսո Աղզ. ժողովը պաշտոնապես  
կորդեգրեր հայկական հարցը, Կոմիտաս  
կզբեր Արշակ Չոպանյանին.

«Ինձ այնպես է թվում, թե մենք մինչև  
նվազագույնով առաջին և դրական քայլը  
չընենք, երբեք չենք կարող երկրորդի մասին  
մտածել կամ մեծամեծս ձգտել: Արդ, մեր  
երկիրն սկզբեն եղել է կովախնձոր արշավող  
և շրջակա հզոր պետությանց աշխարհակա-  
լության ճանապարհի վրա և պահել է ցարդ  
նույն վիճակը: Մենք այժմ իրապես ռուսաց  
շահի առարկան ենք. մեր երկիրն արդեն ո-  
րոշված է, այսօր կամ վաղը ռուս պետու-  
թյան բաժին դառնալու: Ուրեմն պիտի  
ձգտենք մեզ ազատագրել երկու կերպ, թե-  
պետ և երկուրի վերջակետն էլ նույնն է,  
տարբեր ուղիով միասին: Առաջինն է առա-  
վելագույնը՝ ինքնուրույն ու անկախ լինելով  
իբր պատվար ցցվել ռուս դիվանագիտության  
առջև, և երկրորդը՝ նվազագույնը՝ ապավի-  
նել Բոսի Ռուսին և միաձուլլ հայություն

սահմանել: Երկուքն էլ նույն է, բայց երկ-  
րորդն իրագործելի՝ շահերի նույնության վրա  
հենվելով, իսկ առաջինը անիրագործելի:  
Ռուս կառավարությունը ծայրագույն արեւի-  
քեն տուժեց, ուրեմն ընդարձակման ճանա-  
պարհը այս կողմը մնաց. արդեն Պարսկաս-  
տանը բաժանված է իրապես Անգլիո և Ռու-  
սիո միջև. այսպես հայերը պարսկական լծեն  
պիտի ազատվեն և միանան ռուսահայոց և  
փոխադարձաբար ուժովնան. արդ հերթն եկել  
է մեզ՝ տաճկահայերիս: Ես չեմ կարող  
մտքես անցնել, որ ռուս կառավարությունը  
իր շահերը զոհե մեզ. դի նա չէ՛ կարող թուլ  
տալ, որ այս բաժինն ավելի լավ վիճակ ու-  
նենա, քան իր երկրի հայերը. ուրեմն միշտ  
ձգտելու է պահել մեզ (եթե իրան չմիա-  
նանք) իրան կարոտ վիճակի մեջ, որպեսզի  
ապագա գրավման ձեռնտու տարր հանդիսա-  
նանք. արդեն մեր մեծ ջարդերն ապացույց  
են ասածներիս: Ռուս թերթերն էլ միշտ այս  
կետն է, որ շարունակ շեշտում են, թե մեր  
փրկությունը կոելու և կոփելու ենք Փեթ[թե]ր-  
պուրկի պարիսպներու դռներուն առաջ. այս  
էր պնդել ժամանակին Լոսիս Մելիքով Գևորգ  
Գ. կաթողիկոսին զգուշացնելով (երբ սա ռուս  
տաճկական պատերազմի ժամանակ, փրկու-  
թյունը տեսնելով ու հուսալով տաճիկներեն,  
զրեթե բացարձակապես սպասելիս է եղել  
տաճիկներին էջմիածնի մեջ): Արդեն քաջ  
գիտես, որ Անգլիո, Տրանսիո և Ռուսիո միու-  
թյան գլխավոր նպատակն էլ այս էր: Ուրեմն  
չիք փրկություն արտաքո Ռուսիո: Պետք է  
նախ բոլոր հայերը խմբվեն մեկ տերություն,  
մեկ օրենքի տակ, աճեն ու զարգանան բա-  
րոյապես ու նյութապես և ապա ժամանակն  
ինքն է, որ պիտի բերե մեզ մեծ ազատու-  
թյունը. շտապելով, առաջինը շարած երկ-  
րորդ քայլի դիմելով բոլորովին պիտի կոր-  
չենք. տաճիկեն ոչ մի հույս մի ունենաք, մի՛  
սպասեք. նորա ուղեղը քարեժայռից է, զար-  
գացման անընդունակ, լոկ փշրվելու համար  
պիտանի և ռտքի տակը սալահատության  
համար:

Չպետք է բաժանվենք, չպետք է խաբվենք  
Եվրոպայի զանազան խոստումնալից խար-  
կանքներեն, միանալու ենք և գործնական  
ճամփան բռնելու. ըստ իս, առաջին քայլն է  
բոլոր հայության ամփոփել ռուսի իշխանու-  
թյան տակ. երկրորդ քայլն է անտեսապես և  
բարոյապես, զուտ ազգային, առանց օտա-  
րեն ու մեզ անմարս գաղափարներով առաջ-  
նորդվելու՝ զարգանալ. երրորդ քայլն արդեն  
ինքը ռուս հեղափոխությունն է, որ պիտի  
անե, ոչ թե մենք. իսկ մենք ազգվելու ենք  
այդ քայլեն, սակայն պատրաստվելով, լե-  
հերու պես զուտ ազգային շավիղը բռնելով.  
Եվրոպական մարդկային գաղափարները որ-

բան որ ընտիր են ու փափագելի, բայց մեզ անպետք են. պաղ երկրի բույսերը մեր ջերմ արևի տակ կկիզվեն:

Ես վախ չունիմ, թե ոուս կառավարության մեջ կհալենք, որքան ալ որ հալինք, այնուամենայնիվ մեր ինքնագիտակցութունը զարթնած է և եթե խելոք շարժվենք՝ կվաստրկենք. ես այս կարծիքն ունեմ»<sup>21</sup>:

Կոմիտաս ևս բացառիկ շահագրգռությամբ կհետևեր բանակցություններուն զորս Մեծ պետությունները կընեին ինքն իրենց միջև և Բարձրագույն Գրան հետ, և իրեն համար ալ տոնական օր մըն էր երբ թերթերը ավետեցին թե 1914 փետր. 8-ին հայկական բարենորոգմանց մասին համաձայնություն մը կնքված է Ռուսիո և Թուրքիո միջև: Կոմիտաս հավատք ուներ ոուս ժողովրդին վրա և հայուն փրկությունը անկե կսպասեր:

Պրոֆ. Հայկ Արամյանը կպատմե իր մեկ այլը Կոմիտասին, 1914 օգոստոս 28-ին, Բանկալթիի անոր բնակարանին մեջ: Հոգվածագիրը Պոլսեն անցնելով Բեռլին կերթար ուսանելու և շուրջըր Պոլիսը թողուլ առանց Կոմիտասին այց մը տված ըլլա: Վարդապետը զայն կընդունի հաճույքով, և իմանալով որ իր խոսակցիցը Զեյթունեն է՝ կփափագի լսել Ունիո շրջանի երգերը: Ճիշտ այդ պահուն Վարդ փողոցին հայ լրագրավաճառ մը պոռաց. — Ռուսերը ջախջախած են Ավստրիական բանակը և գրաված Լեմբերգը: Պատուհանի փեղկերը բանալ, վեր կանչել, թերթը առնել մեկ եղավ: Երաժիշտ Կոմիտասը մեկն զարձալ քաղաքագետ-աղմագետ: Այնքան խանդավառված էր այս լուրով. այդ վայրկյանին ուշի ուշով դիտեցի իր նրբակազմ հասակին, պարզ և արտահայտիչ աչքերուն հմայքը: Անհաղ կլափեր հուսատու լուրեր: Ինձ դառնալով կարծես հայ ազգին բնածին հույսերու և հուզվերու այդ պահուն թարգման եղավ, հայտնելով որ շատ կը պարտվին կեդրոնական տերությունք, Թուրքիան ստիպյալ անձնատուր կըլլա, Կ. Պոլիսը կզառնա միջազգային ազատ քաղաք, հայերս կմտնենք ոուս մեծ ազգի պաշտպանության տակ: Եվ որքան կհրճվեր այն հեռապատկերով, որ ինք այդպիսի վտափոթյան միջազգային ուստանին մեջ կհիմնե հայկական երաժշտանոց, Բեռլինի իր ուսած կոնսերվատորիայի կազմակերպության հիման վրա»<sup>22</sup>:

... Որուն մտքեն կանցներ այն ատեն, թե այլապես պիտի դասավորվեին ղեպքերը, թե Թուրքիա կուլի պիտի մտներ Գերմանիո կող-

քին, պիտի ճմռթկեր բարենորոգումներու թուղթը, և Թուրան հասնելու իր ցնորքին անձնատուր՝ պիտի ամայացներ հայկական նահանգները:

### X.— Վերջին ելույթները Պոլսո մեջ

1914 տարվան առաջին ամիսները ոգևորության նոր շրջան մը եղան Կոմիտասի համար: Մեսրոպյան տոներուն ստեղծած խանդավառությունը դեռ կհամենար հոգիներու մեջ, իսկ հույսերը, զորս եկեր էր արծարծելու հայկական դատին հաջող ընթացքը՝ կկրկնապատկեր զայն:

Կոմիտաս անձնատուր էր ինքն ալ այդ ոգևորության: Բայց այդ ոգևորության վրա կավելար խանդավառության ուրիշ առիթ մըն ալ: Հրավեր էր ստացած Միջազգային երաժշտական ընկերութենեն մասնակցիլ ընկերության համաժողովին, որ տեղի պիտի ունենար նույն տարվո ամրան, և զեկուցումով հրապարակ գալ համաժողովին մեջ:

Երկու սիրելի նյութեր պիտի ընդգրկեին իր զեկուցումները: Հայ զեղջուկ երաժշտությունը պիտի ըլլար անոնցմե առաջինը: Շատ ատեն անցած էր իր վերջին զեկուցումեն ի վեր ընկերության նախընթաց համաժողովին մեջ, որ տեղի ունեցեր էր Փարիզ 1907 հունվարին, և յոթը տարվան մեջ, որ սահեր էր անկե հետո, Կոմիտաս շատ բան էր գտեր ու շատ բան էր ճշտեր հայ զեղջուկ երաժշտության հետ կապված: Պիտի երթար զանոնք իմացնելու երաժշտական աշխարհին:

Նյութերեն մյուսը հայկական խաղերը պիտի ըլլային: Տասնյակ տարիներն ի վեր ան ղբաղեր էր անոնցմով, պրպտեր ու զններ, ու ամեն անգամ գտնվեր նոր հայտնություն մը առջև: Հիմա այլևս ատենը եկած կսեպեր երաժշտական աշխարհին ալ բանալ խաղերուն գաղտնիքը՝ հիմնված եզրակացությունաց վրա, որուն կրցեր էին հանգիլ իր պրպտումները:

Տարված այս նյութերու մշակմամբ՝ Կոմիտաս տրամադրելի ատեն քիչ ուներ հրապարակային ելույթներու համար: Եվ սակայն զանոնք ևս բոլորովին զանց չըրավ:

Նոր տարվան իր առաջին ելույթը Եսայան Սանուց Միութայան տարեկան հանդեսին էր, որ տեղի կունենար, ինչպես միշտ, Եսայան վարժարանի կարոտ աշակերտներու օգտին: 1913 ղեկտեմբերին էր, որ գացեր էի Կոմիտասին՝ ապահովելու իր ևս մասնակցությունը ան սիրով ընդուներ էր: Ինչպես հիշած ենք Եսայան վարժարանը մոտ էր իր սրտին: Մեր կազմակերպած ցերեկույթը տեղի պիտի ունենար հունվար 9-ին Յունիոն-Ֆրանսեզի մեջ: Կարժն՝ արդյոք հիշել, որ այդ ցերեկույ-

<sup>21</sup> «Պատմա-բանասիրական հանդես», 1958, Ա, էջ 264—265:

<sup>22</sup> «Մերանի գոտի», Բոստոն, 1960, թիվ 2—3, էջ 22:

անձամբ ներկա չկրցա գտնվիլ, ավա՞ղ: անտն էի ես այդ գիշերը, «Ազատամարտ»-ի լիզրերը բավելու համար հոն շորս ամիս, ու նսնտն է, որ հուզմունքով լեցուն նամակ ս ղրկեցի ցերեկույթի կազմակերպիչներուն: Քիչ հետո, 1914 տարվան մարտ 4-ին, Կոմիտաս պղտիկ համերգ մը տվավ ամերիկյան արտականատան մեջ «Կուսան» երգչախումբեն տարված 24 երգիչներով, միասին ունենալով արմենակ Շահմուրադյանը, որ Պոլիս էր այդ ժեշոցին:

Ինչպես Արամ Անտոնյան ալ իր հուշերուն մեջ կպատմե, վարդապետը ծանոթ դեմք մըն էր ամերիկյան դեսպանատան մեջ, ուր շատ արհեստի վիճքը: Տիկ. Մորկընթաու (ամերիկացի դեսպանի կինը) հաճախ կհրավիրեր այն իր երեկույթներուն և Կոմիտաս կերպեր կնվազեր այդ ընդունելու թիվոց ընթացքին):

Իսկ 1914 մայիս 3-ին (ապրիլ 20) Կոմիտաս Փրթի-Շանի մեջ համերգ մը կուտար, ու վերջինը պիտի ըլլար, ավա՞ղ, ու զայն լլեւ բեմի վրա պիտի շտեսնեինք Պոլսո մեջ: Ալ պիտի զրկվեինք իսպառ իր կախարանքին:

Այդ համերգեն անմիջապես ետքն էր, որ պիտի մեկնեի Փարիզ, վերջին անգամ մըն լլ աշխարհին ներկայացնելու համար հայ լոգին իր մեղեդիներուն մեջ:

**XI.— Զեւով Օհանը գտնելու համար**

Սրվանձտյանի բացած դմայլելի այն ածուն ատ քիչ մշակող ունեցավ սահմանեն աստին, մինչ Կովկասի մեջ ամբողջ գրականույուն մը սկսեի էր ստեղծվիլ հայ ժողովուրդի հին բարբերուն և սովորութիւններուն, որքանի նիստ ու կացին, առականերուն և ասածներուն, և բոլոր այն ամենուն մասին, որ ժողովուրդի մը հոգին կբերե զարերուն մեջն, ավանդութիւնսց և զրույցներու, երգեու և տոներու ձևին տակ:

Հայ ավերակները ևս պեղող շունեցան սահմանեն ասդին: Հայ ճարտարապետույան պատմութիւնը զրկված մնաց ճանչնալ կոթողներն ու հիշատակարանները, որոնք պիտի մէկն Արեւմտյան Հայաստանին մեջ: Գլխամարն անգամ դիպվածին կպարտի իր ացած շքեղ գրուիք այդ պատմութիւնս մեջ: Գրամանյան չկրցավ զննել Հայոց Աշխարհին Թուրքիո գրաված մասը:

Արեւմտահայ վանքերը կղպած պահեցին րենց գանձերը: Մագաղաթները լուսին ելլել ուղեցին: Ինչ որ դիպվածը փրկեց, ան միայն ւնցավ արվեստներու պատմութիւնս: Ու որան հրաշալիքներ շբացան գացին զիներ ծնող ժողովուրդին հետ: Հայ բանա-

սիրութիւնն ու հայ մանրանկարչութիւնները ինչն ր պիտի շահեն, եթե ատենին պրպոված ըլլային անոնք:

Հայ երգը ևս, ինչպես տեսանք իր տեղին, մոռացութիւնս տրվեցավ մեր մեջ: Հայուն գեղջուկ երգերը պրպտող շունեցան սահմանեն ասդին: Ինչ որ Կոմիտաս կրցեի էր փրկել անոնց դմայլելի գանձն, միշտ դիպվածին է, որ պարտական է հայ երաժշտութիւնս պատմութիւնը, Մուշեկն ու վանեն Կովկաս ինկած գլուղացիներու կամ պատահական հանդիպումներու առիթն առիթ:



Գավառը, մեկեն, մտահոգութիւնս առարկան դարձավ բոլորին ճիշտ այն օրերուն, երբ հայ միտքը ևս նոր հանգրվան կմտներ հայկական դատին հետ մեկտեղ: Մինչ մարդոց հոգին կփորձեր մխրձվիլ դարերուն խորը հին փառքեր ու գեղեցկութիւններ որոնելու համար հոն ու զանոնք խառնել նոր օրերու ներշնչումներու, բնական էր, որ հետաքրքրութիւն ստեղծեին նաև այն գեղեցկութիւնները, որոնք կշարունակեին դեռ ապրիլ հայրենի հողին վրա իբրև վերջին մնացորդները հին դարերու ավանդութիւնսց:

Հայոց աշխարհը մոգական ուժ մը ստացավ մեկեն բոլորիս համար: Արցունքի հովիտ մը շէր ան հիմա մեր աչքին, ուրկե միայն ողբ ու հառաչ կլսես, ոչ ալ Ավետայց երկիր մը արդեն, ուր մարդ պիտի վազեր երթալ թուղ ու խնձոր քաղելու համար: Ուստի վայր մըն էր հիմա ան, ուր պետք էր երթալ հոգեպես կազդուրվելու և թարմանալու, նոր ավիշով ու նոր ավլունով լեցվելու համար, այն մեծ ճիգեն առաջ, որուն լծվելու կանչված էինք բոլորս, որպեսզի «Կերտենք նոր արշալույսը»:

Փակման խոսքին մեջ՝ այն գրական ասուլիսին, զոր 1913 մայիս 5-ին նվիրեցինք Ռուբեն Զարդարյանին, Կոմիտաս, օրվան նախագահը, տեսակ մը ոգեկոչումը կընեի գավառին ու անոր հոգեկան արժեքներուն.

«Մեր մեջ կենսունակութիւնս ջիղը խաթարված է, որովհետև, մայր երկրեն հեռացած, գաղթավայրերու մեջ է, որ կուղենք բղխեցնել: Գաղթականութիւնը չէ, որ անունդ պիտի տա գրականութիւնս, այլ բուն իսկ հայրենի հողը, ուրկե հեռացած է ան, և որուն վերադառնալու կոչ եղավ այստեղ:

Կովկասյան գրականութիւնս հայտնի դեմքերեն մեկը՝ Խորեն եպիսկ. Ստեփանե, իր կատարած ուսումնասիրութիւններեն ետք կու դար կովկասյան մամուլին մեջ իր ձայնը հնչեցնել թե հայ ժողովուրդը փտած է, որովհետև գեղարվեստ շունի: Այո՛, ազնիվ ներ-

կաներ, մասնական արժանի է այն ժողովուրդը, որ զուրկ է զեղարվեստե, որովհետև ժողովուրդ մը, որ զեղարվեստ չունի, կնշանակի թե զգալու կարողութիւնը չունի: Եվ ինչ է ժողովուրդ մը, որ չի զգար:

Բարեբախտաբար ժամանակը ցույց տվավ, թե Ստեփանե եպիսկ. անիրավ էր իր կարծիքին մեջ, որովհետև եկան հետո միտքեր՝ ցույց համեստ, թե մեր ժողովուրդը իր ծոցին մեջ զեղարվեստի ընդունակութունը պահած է: Եկան Խրիմյաններ, Սրվանձտյաններ, և ավելի նոր ժամանակներս՝ Չիթունիներ, որոնք ժողովուրդի ծոցին դուրս քաշեցին գրական մարգարիտներ: Այդ ապացույց էր, թե հայ ժողովուրդը արժանի չէ մեռնելու:

Կոմիտաս հետ ուղղակի ներքողը կրներ գավառին և անոր հոգեկան դանձին.

«Յարդ գավառը մեր աշքին առջև լծորդված է խավարի հետ: Մենք մեծ մասամբ գավառը կճանչնանք իր տգիտութիւնով և հետամնացութեամբ: Բայց գավառը իմ աշքիս առջևը կպատկերանա իբրև սրբավայրը հայ զեղարվեստի նշխարներու. հոն կտեսնեմ հայ երգը՝ հայ զեղջուկին շրթներուն վրա, հայ գութանը, հայ զեղջուկը՝ իր արորին ու մաճկալին հետ, ու քարերն անգամ նվիրականութիւն մը կհիշեցնեն ինձի: Այդ քարի բեկորներն են մեր հայրենիքը, ավնիվ հանդիսականներ. հոն են շեշտերը մեր զեղարվեստին, և ոչ թե մայրաքաղաքներուն մեջ, ուրկե մենք այդ գավառը կդիտենք իբրև խավարի վայր»:



Ճիշտ այն օրերուն, երբ Կոմիտաս իր ապրիլ 20-ի (մայիս 3) համերգը կպատրաստեր, որ վերջինը պիտի ըլլար, ավա՞ղ, իր համերգներուն, Պոլսո մեջ խումբ մը մտավորականներ նախաձեռնութիւնն ստանձնեցին Հայաստանի ուսումնասիրութեան համար կազմակերպութիւն մը ստեղծելու: Կոմիտաս մեկն էր նախաձեռնողներէն, և անոնց առաջին հանդիպումները իր տանը մեջ իսկ եղան:

Առաջին ժողովը տեղի ունեցավ մայիս 24/31-ին, որուն հրավիրված էին 18 անձեր՝ մտավորականներ հայ աշխարհի զանազան գավառներէն և տարբեր մասնագիտութիւններու պատկանող: Հայաստանը ուսումնասիրելու առաջարկը ընդունվեցավ միաձայն, կարգացվեցավ պատրաստված նախագիծը և ընդունվեցավ հանձնախումբ մը, բաղկացած պրոֆ. Աստ. Խաչատրյանե, Հովհ. Հակոբյանե և է. Ակնունիե, հաջորդ ժողովին ներկայացնելու համար՝ արդեն մշակված կանոնագիրը:

Երկրորդ ժողովը տեղի ունեցավ մայիս 31-ին (հունիս 13), ուր և կարգացվեցավ ու

մանրամասն ընդունվեցավ հիմնական կանոնագիրը:

Ընկերութիւնը իբր նպատակ կորդեզրեր իրեն մասնագիտորեն ուսումնասիրել Հայաստանը՝ գլխավորապես աշխարհագրական-պատմական, տնտեսական-վիճակագրական, ազգագրական և հնագիտական-զեղարվեստական տեսակետով, հրատարակել ուսումնասիրութիւնները հայ և, եթե հարկ ըլլա՝ օտար լեզուներով ալ, Հայաստանը ղրկել ուսումնասիրող խումբեր կամ անհատներ, կորուստե ազատել հնութիւնները և այդ նպատակով հաստատել թանգարան և կամ օգտվել եղածներէն, հարաբերութիւն հաստատել Եթովպիայի և Կովկասի այն ընկերութիւններուն հետ, որոնց նպատակն է ուսումնասիրել Արեւելքը՝ մասնավորապես Հայաստանը:

Նույն ժողովին մեջ էր որ որոշվեցավ իսկույն պրոպագանդ սկսիլ այն գործին համար և նախնական խորհրդակցութիւն մը հրավիրել բոլոր անոնք, որ կփափաքեին Հայաստան մեկնիլ: Այդ նպատակով ալ ընտրվեցավ առժամյա գործադիր մարմին մը, որուն կանգամակցեին պրոֆ. Աստ. Խաչատրյան, դոկտ. Պաղի Խան, Հովհ. Հակոբյան, Գար. Փաստրմաճյան և է. Ակնունի:

Այնպես կհուսացվեր, որ աշնան լուրջ թափ պիտի ստանար նորակազմ ընկերութիւնը և իր շուրջը պիտի համախմբեր հայ մտքի բոլոր ներկայացուցիչները և հայ բնագավառի բոլոր բարեկամները:

Կոմիտասն ու Վարուժանը առաջիններէն եղան, որ գավառ մեկնել ուղեցին: Կուզեին տեղվույն վրա երթալ փնտրել հայ ժողովուրդի հոգեկան զանձերը, իրենց ականջը տալ հայ ժողովրդի սրտի զարկին: Ինչ գոհարներ պիտի բերեր Կոմիտաս Վանեն ու Մուշեն, ու Վարուժան ի՞նչ ներշնչումներ Սասունցի Դավիթին համար, զոր կուզեր անմահացնել մեծ դուցազներգութեամբ մը, իսկ Կոմիտաս օպերայի պիտի վերածեր զայն:

Սասունցի Դավիթը օպերայի մը նյութ դարձնելու մտածումը Կոմիտաս վաղուց է ունէր:

Մանուկ Աբեղյան կպատմե Կոմիտասի մասին իր հուշերուն մեջ, թե «նրա երազներից մեկն էլ այն էր, որ միշտ պատրաստվում էր մի օպերա շարադրելու հայկական և ընդհանրապես արևելյան եղանակներու ոգով. դրա համար ամենից հարմար նյութը համարում էր մեր «Սասնա Մոեր»-ը, և որքան գիտեմ, մի քանի եղանակ շարադրել էր: Այդ միտքը հղացել էր նա ուսանողական ժամանակ, և բեմին ծանոթանալու համար նա իր պրոֆեսորի միջնորդութեամբ մի քանի անգամ Բեռլինում նույնիսկ բեմ էր ելել, շեմ

հիշում, թե որ օպերային խմբի մեջ, իբրև խորհատ: Այս մասին նա շատ բնորոշ էր պատմում»<sup>23</sup>:

Ոչ Կոմիտաս կրցավ մեկնիլ, ոչ ալ Վարուժան: Տարբեր հոգեր զիրենք Պոլիս կպահին այդ պահուն:

Երկու հոգի միայն վճռեցին մեկնիլ որևէ գնով, — Քերլմեզն ու Չեոկյուրյան:

Առաջին ծիծեռնակներն ըլլալու բախտը վիճակիվեցավ ուրեմն անոնց, որովհետև քաջութունն ունեցան ճամփա ելլելու իսկույն, բայց չկրցան լրման հասցնել իրենց ուխտը: Պատերազմը ծագեցավ ու կեցուց մարդոց ճիգերը մեկնել:

Չեոկյուրյան Պոլիս դարձավ հարևանցի պատույտ մը միայն ընելի հետո հայոց երկրին մեջ, սակայն հոգին արդեն լեփ-լեցուն նոր տեսիլքներով:

— Նոր մարդ մը կդառնամ ետ, կըսեր ան մեզի:

Ատեն շունեցավ սակայն պատմելու մարդոց կախարհանքը, զոր միասին կբերեր: Պիտի խառնվեր շուտով ինքն ալ սպանող զոհողներու դժխեմ կարավանին, սիրտը հուլզերով լեցուն, ճիգերու դեռ ընդունակ: Կես մնացած մը և ան, ինչպես շատ-շատերը, զորս ճիվաղը խեղդեց իրենց երկունքի պահուն:

«Խմորման օրեր էին այդ տարիները, 1913—1914, — կգրե Չիթունի, որ մեկն էր Եդեր ընկերակցության ամենն ջերմ ջատագովներն, — Արևելյան վեց նահանգներուն համար՝ Հոֆ և Վեսթենենկ մարզպան կնշանակվեր: Վեսթենենկը Նույնիսկ Ոստանիկ մկրտված էր ժողովրդի բերնին մեջ, դեռ իր սպաշտունին շանցած: Ամեն հայու սրտին մեջ

նշուել կսկսեր այլիլ լայն ու ազատ հայրենիքի մը գեղեցիկ հեռապատկերը:

Կոմիտաս վարդապետի ընկարանին մեջ՝ հիմնադիրներու անդրանիկ նիստը տեղի կունենար ու կկազմվեր՝ Հայաստանի Ոստանախորձքան Ընկերությունը, ընդարձակ ծրագրով մը:

Շուտով առաջին շրջիկ առաքյալը՝ Տիգրան Չեոկյուրյան, կմեկնեի Հայաստան, ուրիկ կվերադառնար ազգային հոգին ու վաճառութուններուն նոր մեռոնով մկրտված: Ինձի կպատմեր անօրինակ խանդավառությամբ, թե ինչ աննման զմայլիկ հեթաթներ լսեր էր Վանա, Մուշի, Կարինի հայ գյուղացիներուն բով:

«— Հայա՞, — կհարեր ոգևորված, — Լալուզարի հեֆիաքը պիտի պատմեմ իմ աշակերտներուս, զանոնք պիտի թոցնիմ...»<sup>24</sup>:

Փանոս Վան մնաց: Ապրիլյան դեպքերը զայն հոն պիտի գտնեին: Մահու և կենաց կռիվը, զոր հայ ժողովուրդը մղեց հոն, հին հայդուկը արթնցուցին արվեստագետին մեջ: Գործոն մասնակցություն բերավ ինքնապաշտպանության այդ կռիվներուն, ու հայ ժողովուրդին հետ ինքն ալ թողուց հայ հողը, սրտով ու հոգով խոցված: Կրած հուլումները սուղ էին արժեք իրեն. ձեռքը կզոզար: Բայց ան երբեք վրձինը չթողուց ձեռքեն և երկու տասնյակ տարիներ դեռ նկարեց ան:

Կովկասեն Պոլիս, Պոլիսեն Ամերիկա ան թափառեցավ երփնապնակը միշտ ձեռքը, իր վերջին ներշնչումները երթալ քաղելու համար հայրենի հողեն ու այնտեղ ալ հանդիլու համար, Վանա կարոտը ներսը:

... Չենով Օհանը լուռ մնաց այսպես...:

<sup>24</sup> Չիթունի՝ Կոմիտասին հետ, «Հայրենիք» ամսագիր, 1936, 12-րդ, էջ 85—86:

<sup>23</sup> «Ժամանակակիցները Կոմիտասի մասին», էջ 72—